

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

Հաշվետվություն

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի 2014-2015 ուս. տարվա

/գիտխորհրդի նիստ, 25 նոյեմբերի 2015թ./

Օրակարգ

1. Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանի՝ ֆակուլտետի 2014-2015 ուս. տարում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 50-ը: Նիստը նախագահող Ա. Առաքելյանը առաջարկեց դեկանի ելույթի համար հատկացնել 20 րոպե, իսկ մյուս ելույթների համար՝ 5-ական րոպե: Միաձայն քվեարկության արդյունքում գիտխորհուրդը հաստատեց տվյալ ընթացակարգը:

Ս. Աբրահամյան՝ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ
/հաշվետվությունը կցված է/

Յու. Գաբրիելյան՝ Գերմանական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ.

Նախ ուզում եմ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում կատարված աշխատանքները գնահատել լավ: Իրավացի է դեկանը, երբ նշեց, որ կարգապահության հարցում բավականին առաջընթաց ունենք: Լսարանների հետ կապված խնդիրն եմ համարում լուրջ, եթե հնարավոր լինի այդ խնդիրը կարգավորել՝ շատ լավ կլինի: Նշեմ, որ փոքր գրանտներ ունենք, բայց հումանիտար ոլորտում մեծ գրանտներ ձեռք բերելը այնքան էլ հեշտ չէ: Այնուամենայնիվ, դարձյալ փորձելու ենք այդ ուղղությամբ աշխատել: Խնդրահարույց է դիմորդների պակասությունը: Խրախուսելի է, որ անզլերեն քննություն հանձնած դիմորդները կարող են սովորել մեր բաժնում: Եվ, ի վերջո, ուզում եմ ռեկտորից խնդրել պարգաբանել, թե ինչու մենք չունենք բժշկական ապահովագրություն:

Ս. Վարդանյան՝ Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.

Լավ եմ գնահատում ֆակուլտետի այս ժամանակահատվածում կատարված աշխատանքը: Ուզում եմ միայն նշել, որ ուսանողական խմբերի տասնհինգ հոգի և ավել քանակը խոչընդոտում է ուսուցման որակի բարձրացմանը:

Նորայր Միրաքյան՝ Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ:

ՈւԳԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում շատ ակտիվ է եղել: Ներկայացրել ենք բազմաթիվ ելույթներ գիտաժողովներում: Շնորհակալություն եմ ուզում հայտնել ամբիոնների վարիչներին ՈւԳԸ կազմը համալրելու ընթացքում մեզ օգնելու և մնացած այլ հարցերում մեզ մշտապես աջակցելու համար:

Բագրատունյան Անահիտ՝ ՈւԽ նախագահ

Մենք նույնպես շատ ակտիվ ենք եղել հաշվետու ժամանակաշրջանում: Բազմաթիվ գիտական միջոցառումներ ենք անցկացրել, ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության շրջաններում:

Մարինե Օհանջանյան՝ ՈւԼՍ անդամ

Ուզում եմ դիմել դասախոսներին և ամբիոնի վարիչներին, որ մեզ տեղյակ պահեն ուսանողների համար նախատեսված ծրագրերի մասին:

Մ. Ապրեսյան՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոց.

Միանալով իմ կոլեգաներին՝ նշեմ, որ գնահատում եմ ֆակուլտետի աշխատանքները լավ: Շնորհակալություն եմ հայտնում ռեկտորին միջազգային թեստավորման գործընթացում մշտապես մեզ աջակցելու համար: Շատ հաջող են ընթանում այդ թեստավորման հետ կապված աշխատանքները: Շատ տխրեցի, երբ իրավաբանների համար մեր կազմակերպած դասախոսությանը շատ քիչ մարդիկ հաճախեցին: Նորից շնորհակալություն եմ հայտնում ռեկտորին և մեր դեկանին:

Ա. Առաքելյան՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ.

Մեր ամբիոնի աշխատանքի արդյունքը դեկանի կողմից ներկայացվեց ճիշտ, որի համար շնորհակալություն եմ հայտնում դեկանին: Իրոք, մենք շատ ակտիվ ենք աշխատում: Կարծում եմ բոլորն էլ համաձայն են, որ ֆակուլտետի կատարած աշխատանքները գնահատվեն լավ:

Ա. Միսնյան՝ ԵՊՀ ռեկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Կարծում եմ լավ չէ, որ պասսիվ եք ներկայացնում ձեր կատարած աշխատանքները: Մեզ անհանգստացնում է անգլերենի մակարդակը ոչ մասնագիտական ֆակուլտետներում: Ցանկանում ենք, թե ոչ, աշխարհն այսօր բազմալեզու է, ոչ միայն ուսանողները, այլև եվրոպական և այլ երկրների դասախոսները լիարժեք տիրապետում են անգլերենին, իսկ մեզ համար դա դեռևս խնդիր է: Պրոբլեմ եմ համարում նաև մեր թարգմանչական դպրոցի վերացումը, ստիպված ենք դիմել դրսի հայերին, որպեսզի մեզ օգնեն այդ հարցում: Այն ազգը, որը հինգերորդ դարից թարգմանչաց դպրոց ունի, այսօր չի զբաղվում դրանով, ավելին, վերջ է տալիս այդ դպրոցին: Շատ լուրջ պետք է սրա մասին մտածել: Համաձայն եմ, որ ձեր ոլորտում դրամաշնորհները քիչ են, բայց դրանք կան, կարելի է կենտրոնանալ միջդիսցիպլինար գիտակարգերի վրա: Օրինակներ ունենք, և դրանք հաջող են ընթանում: Մի շարք ֆակուլտետներ դրամաշնորհների հարցում առաջ են, օրինակ կենսաբանները: Կարծում եմ պետք է օրինակ վերցնել: Կուրատորական համակարգը չի աշխատում, դա կարող է ծանրաբեռնվածությունից հանվել: Այսօր ունենք քսան հազար ուսանող, Իջևանի մասնաճյուղի ուսանողները ներառյալ, կարծում եմ այս քանակը իջնելու է, ուստի ծանրաբեռնվածությունը պակասեցնել չենք կարող: Առաջիկայում երկու դատարկ դասարաններ են գալու, մեր վիճակն ավելի է վատանալու: Ելքն այն է, որ կարողանանք լավ կոնտինգենտ բերել և նաև ապահովել ուսուցման որակական կողմը: Կուզենայի, որ խրախուսեք վճարովի համակարգը լեզվական ծառայությունների ոլորտում: Կարգապահություն դեռևս շատ լավ չեմ կարող համարել: Անվտանգության ծառայությունը քիչ օգուտ է տալիս, քանի որ մենք միևնույն է ներքին կուլտուրայով դեռևս կարգապահ չենք: Այսօրվա վտանգավոր իրավիճակում առավելապես պետք է ապահովել անվտանգություն, որը անկարգապահ մարդը չի կարող անել: Ուսանողները ճիշտ են, կարողացեք այնպես անել, որ ուսանողները մասնակցեն տարբեր ծրագրերի: Որակավորման պատրաստման դասընթացներին մեծ ուշադրություն ենք դարձնելու: Գլուխ պահողները տուժելու են: Երեք հազար հոգու բժշկական ապահովագրությունը կազմակերպելը դժվար է,

համալսարանը դա դեռևս չի կարող վճարել, պետք է պահվի ձեր աշխատավարձից, որին համաձայն չեք լինի: Եվ վերջապես մի խնդիր, խոսքը հյուրանոցի վաճառքի մասին է, մենք չէինք կարողանում այն պահել, բացի այդ առաջարկվեց, որ դրա դիմաց վերանորոգվեն Բլդանչայն ու համալսարանական սպորտ համալիրը: Ամեն ամիս սեփականատերը մեզ փոխանցելու է գումար, որն էլ ծախսելու ենք շինարարության վրա: Ունենալու ենք յոթ դահլիճ, երկու հրաձգարան, վերականգնողական ֆիզկուլտուրայի դահլիճ, լեռնագնացության պատ, լսարաններ և այլն: Նոր կցաշարք կկառուցվի մի շարք ամբիոնների համար: Ներկայիս երեքհարկանի շենքը կդառնա տասնինը համար ունեցող հյուրատուն: Մյուս տարվա վերջից սա կվերջացնենք և կանցնենք Բլդանչային: Չունենք հանրակացարան, բայց կարծում եմ հետագայում Ադի Հանքի կիսատ մասնաշենքում կունենանք երկու հարյուր տեղանոց հանրակացարան: Աշխատավարձը բարձրացնելը պրոբլեմատիկ է դիմորդների թվի պակասի հետ կապված: Տասներեքերորդ աշխատավարձ լինելու է: Հավելավճար ստանալու են այն մարդիկ, ովքեր աշխատում են, իսկ չաշխատողները դա չեն ստանալու: Բոլոր հարցերը համալսարանի ղեկավարությունը քննարկում է, անպատասխան որևէ հարց երբեք չենք թողնում, դրական, թե բացասական, բայց պատասխանում ենք:

25 նոյեմբերի 2015թ.